



Հավելված թիվ 1
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
01.02.2021թ. թիվ 15-Լ որոշման

Ծ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ

ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրելու մասին

ք. Երևան, Զաքյան 7-2

01.02.2021թ.

Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ **2021 թվականի մարտի 6-ին (շաբաթ օր), ժամը 09³⁰-ից Երևան քաղաքի Զաքյան 7-2 հասցեում գրնվող ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) տեղի է ունենալու Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.**

- ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրություն.
- ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական գործը նախապատրաստող անձանց ընտրություն:

1. Օրակարգային հարցերով **քվեարկությունը** սկսվում է **2021 թվականի մարտի 6-ին, ժամը 09³⁰-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 17³⁰-ին:**

2. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների և կարգապահական գործը նախապատրաստող անձանց **թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը)** սկսվում է **2021 թվականի փետրվարի 6-ից (ներառյալ) և ավարտվում է 2021 թվականի փետրվարի 11-ին* (ներառյալ):**

3. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների և կարգապահական գործը նախապատրաստող անձանց **թեկնածուների քարոզությունը** սկսվում է **2021 թվականի փետրվարի 12-ից* (ներառյալ) և ավարտվում է 2021 թվականի մարտի 4-ին, ժամը 18⁰⁰-ին:**

4. **2021 թվականի մարտի 5-ը համարվում է լուսային օր:**

5. Յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**

6. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**

7. Քվեարկության գաղտնիությունը քվեարկող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

Ընդհանուր ժողովի հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկությունները, կարող եք բեռնել ՀՀ փաստաբանների պալատի www.advocates.am կայքէջից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմ

* Վրիպակն ուղղվել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 09.02.2021թ. թիվ 19-Լ որոշմամբ